

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիարժէքով.
Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանիւր տողատեղին 10 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ գրոյց.
Նամակ երեւանից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Մանրակար-
— ՆԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ. Մի աւանդ Պետտիգորսկի
ընդերայեցեալներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Մենք հետաքրքրական ժողովուրդ ենք եղել
օտարների համար. երկար, երկար ժամանակ
մեզ չէին ճանաչում. Բայց վերջին տարիներս
մեր մասին խօսողները ամբար շատացել են,
որ արդէն կարելի է մի մեծ, հարուստ գրա-
դարան կազմել հայերին նուիրված լրագրական
թղթաշինքից եւ առանձին գրքերից:

Ով ասես, որ գրած չը լինի մեր մասին:
Գրել է անգլիացիներ, ամերիկացիներ, ֆրանսիա-
ցիներ, իտալացիներ, այժմ գրում է եւ շատ է գը-
րում գերմանացիներ, որ պատարաստվում է Արե-
ւելի տէրերից մէկը դառնալով: Եւ ամենքը աշ-
խատում են պարզել, թէ ինչ ենք մենք, իրեւ-
նոցի ժողովուրդը, վկայականներ են տալիս մեզ, մեր
ճակատին դրօշմ են կնքում: Գիտէ՞ք արդէ՞ք, որ
մեր դատաւորներից շատերը չեն, որ նայում
են հայերին մարդասիրաբար. գիտէ՞ք, որ շա-
տերը մի առանձին եռանդով են մեզ դատա-
վեցնում, հրէշ հրատարակում մեզ: Մեր բա-
նարանը հարստացած մի նոր բառով—«հայա-
կերութիւն»:

Եւ, դժբաղդաբար, պէտք է խոստովանեմ,
որ քննարկող առատանում է այն գրողներին
թիւը, որոնց մէջ հայը ներկայացնում է իւր-
րեւ երկնքի պատիւ չընկալող ազգերի հա-
մար Այս քաղաքին իմ աչքը դրված է Պետեր-
բուրգում մի վայրէջքի մի նոր ռուսերէն գիրք, մի
բնական մեծ հատոր, որ խոսում է Անգլիոյ-
կաթի ազգերի մասին: Դա դեռ առաջին հա-
տորն է, պէտք է լինի եւ երկրորդ հատորը:
Անգլիոյկաթեան բոլոր ազգերը՝ վրացիներ, թուր-
քեր, ուսում իրանց մասին շատ քիչ են խօսում:

ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ

ՄԻ ԱՆԱԿԱՆ ՊԵՏԱԳՐԱԳՐԱԿԻ ԶՐԵՐԸ ԱՅՑԵ- ԼՈՂՆԵՐԻՆ

Երկաթը մաշվում է, քարը հալվում, բարի
անունը մնում է: Այդպիսի անուն կրող ան-
հատը գերեզմանում անգամ ապրում է: Գե-
րեզմանի հողը, մամոտած գերեզմանապարտը,
այսպիսի ժամանակը անգոր են իրանց պայանով
ճանրութեան տակ մեռնելը այդպիսի մեծ սըր-
տեր: Դրանք գերեզմանի միջից խօսում են,
բողբոսում, պատգամներ տալիս, գաղափարներ
արձարծում: Դրանց գերեզմանները այն լու-
սաւոր ուղիներն են տիրող խաւարի մէջ, ո-
րոնց վրայով գալիս, անցնում են հազարավոր
սերունդներ: Դրանց դամբարանները այն մըշ-
տաւոր կանթեղներն են, որոնցից վառում է
իր լուսաւոր ջահը եկող սերունդը եւ բռն
նշխարներով լի, ամենայն կամակորութեամբ
առաջ է արշաւում իրագործելու այն ժամա-
նակից գաղափարները, որոնց անմահական
փորձած գերեզմանը ուղղում էր կրակի:

Մենք ունենք այդպիսի գերեզմաններ, որոնք
անփոփոխ են այնպիսի անուններ, որոնց ա-
ռաջ ամենքս երախտապարտ սրտով ծունկ ենք
չոգում, որոնց շուրջ միանում ենք եւ սրտանց
գնահատում ենք մի աւելորդ անգամ եւս մեր
անկեղծ յարգանքը արտայայտած լինելով: Այդ-
պիսի անմահական անուն կրել—երկնքը չոր-
նէլ է եւ հանգուցեալ Գրիգոր Զանգեանին:
Եւ այդ մի անուն է, որի առաջ մարդ իսկա-
պէս խոնարհվում է: Մի անուն, որ կապված

այդ գրքի մէջ. ամենքի գանգատն ու հառա-
չանքը հայն է, այնպէս որ ամբողջ հատորը
հայերին է վերաբերվում, հայերի զարհուրելի
մեղքերն է պատմում:

Վրացիին հաւատացած է, որ եթէ ինքը դժ-
բաղդութիւն ունի այս աշխարհի վրա, եթէ իր
հայրենիքը այսօր հրեշտակների աշխարհ չէ,
դրախտ չէ, պատճառը հայերն են, միմյան
հայերը: Թիւրքը հառաչում է, իրան մի սքան-
չելի մարդ, մի երկրաշնակ է յայտարարում:
Իսկ հայը—«՛, դա մի զարհուրելի ազգ է, որ
քանից, քարոքանք է արել ամբողջ Թուր-
քիան, այժմ էլ պիտի քանդէ, քարոքանք անէ
ամբողջ Կովկասը:

Որքան իմաստուն, որքան աւհնագէտ են
դարձել ազգերը: Որպիսի միաբանութեամբ,
համերաշխութեամբ նրանք հասել են «ճշմար-
տութեան» ծայրագոյն աստիճանին: Գիտէ՞ք
աշխարհը սերունդների եւ քրտմութեան օթե-
ւան դարձնելու միջոցը: Թոյլ տուէ՛ք դրանց, եւ
մի հինգ տարվայ ընթացքում—ամենաշատը—
աշխարհը նրանք կը դարձնեն մի այնպիսի տեղի,
ուր գաղտն արածում է գալիս հետ, ուր չի լսվի
եւ ոչ մի հատ հառաչանք, ուր մարդու աչքը
երբեք չի թացանայ արտասուքից:

Այն, սա հանաք չէ, սա երազ չէ. վրացին,
թիւրքը եւ բոլոր ուրիշ ցեղերը գտել են
այդ կախարդական գաւազանը: Պէտք է
միայն թոյլ տալ, որ նրանք շարժեն այդ գա-
ւազանը, եւ, հաւատացե՛ք, երկիրը կը դառնայ
«Հազար ու մէկ գիշերների» արժանի մի ան-
կիւն:

Բայց թէ որն է այդ կախարդական գաւա-
զանը, ինչպէս պէտք է նրան շարժել—այդ հօ-
ինքն ըստ ինքեան հասկանալի է: Մի հատ դը-
ռովը կայ, ուր դարձվում է այս աշխարհի
դժբախտութիւնը, եւ դա հայ ազգն է: Մի
հատ անէծք է ծանրացած մարդկութեան ու-
սերին, եւ դա հայն է, միայն հայը: Կործա-
նեցէ՛ք դժոխքը, արմատից ոչնչացե՛ք անէծքը—
եւ կախարդական աշխարհը, մեղրի ու կարագի
հայրենիքը կը գալ ինչն ըստ ինքեան...:

Կարգավոր այդպիսի խոր, սարսափելի խոր,
անյատակ իմաստութիւնները, եւ մոռանում եմ
իրականութիւնը եւ ինձ կլանում է մի մեծ,
անհուն մարդասիրութիւն: Հէքիթական տրա-

է Ռուսաստանի ամենափառաւոր ժամանակա-
շրջանի, «մեծ բարենորոգումների» ժամանակա-
շրջանի հետ: Մի անուն, որի հետ կապված են
մեր ամենամարդկային ու զգացմունքները,
մի անուն, որ շատ բան է ասում զգայուն
սրտերին, մի անուն, որի յիշատակը օրհնում
են հազարավոր տանջվածներ:

Եւ հետո չէ յուլիսի 17-ը (նրա մահվան
երկրորդ տարեդարձը), երբ նորից այդ անունը
մի յուզմունք, մի նոր շարժում կառավարեց
Հոգեհանգիստների տարափ, ճանրի կարկուտ
ընթացքին այդ օրը մեր եկեղեցիներում:
Տաղանդաւոր հրապարակախօսի եւ անբաղ-
հայ որբերի հօր յիշատակը մի անգամ եւս կը
վերականգնանայ մոռացութեան տրված մեր
յիշողութիւններին մէջ: Անս այդ օրվայ չէմ-
քում եւս եւս ուղղում եմ վերականգնանք իմ
յիշողութիւնները անցեալ թւականի յուլիսի
17-ի մասին կովկասեան հանրային շրերում:

Անցեալ տարի ով եղել է Պետտիգորսկում,
ով այցելել է հայոց եկեղեցին, նրա բազում
անշուշտ նշարած կը լինի՝ ակացիաների թա-
ւուտի տակ հանգստացող մի հիւանդի: Նրա
ձեռնափայտը, կողիկաղ քայլածքը ցոյց էին
տալիս, որ մարդը երկնայէլ է մի տեւական,
ծանրատար հիւանդութեան: Սակայն նրա
լուրջ, այրական խելացի դէմքը, բարձր, արի-
տոկրատիկ լայն ճակատը, մեծ, կրակոտ աչ-
քերը ապացոյց էին, որ նա հասարակ դէմք-
րից չէր: Նրան առաւօտից երկնայ չընկալ-
տում էին ջրերը այցելող մեր երկտասար-
դութեան ամենալաւ ոյժերը, բարեկամներ, ծա-
նոթներ, համակրողներ: Նա առաւօտից երկնայ
խօսում էր, ճառում, վիճաբանում, չորս կողմ
խորհուրդներ տալիս եւ այդ բոլորը նա անում
էր մի այնպիսի երկտասարդական աշխոյժով

մարդկութիւն է գալիս վրաս եւ եւ ուղղում եմ
«գէթ մի ժամ, մի րօպէ» աշխարհի տէրը դառ-
նալ: Ի՞նչ կանէի, ընթերցող, գիտե՛ք Սիրելիով
մեր չքնաղ երկիրը, սիրելիով մարդկութիւնը,
եւ կը հրամայէի մի ժամում վերացնել դժբախտ
հարեւաններս՝ տանջվող մարդկութեան անէծ-
քը: Կը հրամայէի, որ հայակերութիւնը թըղ-
թից ու գրքից անցնէր ուղղակի կեանքի մէջ,
գործադրվէր ոչ թէ թղթով ու թանաքով, այլ
առամներով: մազիւնեղով, երկաթով ու պող-
վատով: Թող, կասէի, մարդկութիւնը մի ա-
րիւնտ խնճոյք էլ վայելէ, միայն թէ փրկվի,
երջանկանայ: Հայ ազգ չէր մնայ եւ մեր ա-
մենքին սիրելի Կովկասը կը դառնար երանու-
թեան, օրհնութեան մի վայր: Օձեր ու թու-
նաւոր միջատներ չէին սողայ մեր հողի վրա,
մաշկաբիւն չէր կեղեքի մարդկութիւնը, անա-
պատներ չէին լինի, աւազակութիւնը «երկաթի
դարերի» աւանդութիւն կը դառնար. երկա-
թուղիները ամեն ուղղութեամբ կանգնէին մեր
լեռնաստանները եւ երջանիկ, կայտառ, թարմ
մարդկութիւնը ամեն օր, ամեն ժամ արեգակի
տակ հանդէս կը բերէր իր ծայրագոյն երջան-
կութիւնը:

Այն, եթէ ես լինէի այդպիսի մի իշխան,
կանէի այդ բանը: Թող ես ազգասէր չը հա-
մարվէի մեր այնքան կրակով, հրաշքի ազ-
գասէրների աչքում, բայց կանէի: Միթէ, ճշ-
մարտ, եւսամոլութիւնը այն աստիճան պիտի
մեզ քարացնէ, որ մենք չը նկատենք կամ ոչնչի
տեղ դնենք աշխարհի տառապանքները: Ինչո՞ւ
բարեբարութիւն չանել ընդհանուր մարդկու-
թեան, ինչո՞ւ մարդասէր չը լինել: Բուդդան,
ասում են, մի օր տեսաւ քաղցածութիւնից
անաղիղ մի աղուի եւ ինքը իր յօտար կանգով
ընկաւ ամենի գաղափարի դիրքը, որպէս զի իրան
ուտէ եւ քաղցածութիւնից չը ստակէ: Եւ ա-
ղուի, ի հարկէ, կերաւ նրան: Որպիսի գերա-
զոյն սեր դէպի դժբախտ: Եւ Բուդդան փա-
ռաբանվում է այդպիսի անձնագիտութեան հա-
մար:

Մասնեցէ՛ք, Զափահաս մարդիկ, աշխարհ
տեսած, աշխարհի փորձով հառաւանգած մար-
դիկ, բոլորովին հաւատացած են, որ մեզ հետ—
ամենադժոխակ թշուառութիւն է, առանց մեզ
—դրախտ է: Եւ ինչո՞ւ պիտի մենք զրկենք

եւ բուն եռանդով, որ ամենին հաւատ էր
սերնչում, իր կենդանի ուժով խօսելի ազդու-
թեամբ իր ունկնդիրներին դէպի գործ էր
տրամադրում: Եւ այդ մարդը հանգուցեալ Աս-
տուածատուր Կաճկաճեանն էր:—Մէկը մեր
հասարակական այն բացառիկ դէմքերից, որոնք
իրանց կեանքի ծանր ճգնաժամներին, բաղդի
խտառիւր հարուածների տակ անգամ, հաւա-
տարի են մնում իրանց դաւանանքներին եւ
միայն մի քաղցր վայելչութիւն ունեն—ուրիշի
համար պարեմ, ուրիշի հետ տանջվել եւ ուրի-
շի արտասուքը սրելը: Եւ զարմանալի է, այդ
բիւրեղեանի մաքուր մարդը իր 54 ամեայ
ծերութեան հասակում միշտ երիտասարդ էր,
զգացմունքների մի ծով, մշտապէս գրգռված
մի նետար, մի անկրկն զարկող բազկերակ, որ
ինչին առիթ անգամ բաց չէր թողնում իր
չընկալողների մէջ զգացմունքներ յարուցա-
նել, գործ առաջ բերել եւ իր հասարակութեան
օգտակար լինել, ուր էլ գտնվէր նա—տանը,
դուրսը, եկեղեցում, թէ ժողովարաններում,
օտար երկրներ տակ, թէ իրան քաղաքայող ցաւի
հետ կուսելու: Անս այդ բարեամտութիւնների
չորհրդին էր, որ նոյն իսկ անցեալ ամառ, երբ
յուլիսի 17-ին Պետտիգորսկի եկեղեցում պիտի
կատարվէր անմոռանալի Գ. Զանգեանի մահվան
տարեդարձի հոգեհանգիստը, Կաճկաճեանը հարց-
բարձրացրեց այդ օրվայ յիշատակն եւս յաւեր-
ժացել մի բարի գործով եւ առաջարկեց թէ
տեղացիներից եւ թէ եկեւր հայերից մի դու-
մար ժողովին, որով կարելի լինէր որբեր պահել
Զանգեանի ուսումնայ որբանոցներում: Աս-
վածը կատարված էր: Նոյն ծառերի տակ, նոյն
ցաւագարը իր նստած տեղում ամենայն հեշ-
տութեամբ ժողովից եօթ որբի տարեկան ապ-
րուստի միջոցը 350 ռ., որպիսի գումարը եւ

մարդկանց դրախտից Յիշեցէ՛ք, լաւ յիշեցէ՛ք, թէ
դժբաղդ մարդկութիւնը քանի հազար տարիներ
է, որ որոնում է դրախտը: Շատ մեծ խելքեր,
չը կարողանալով գտնել դրախտը մեր աշխարհի
վրա, բարձրացրին, հանեցին երկնքը եւ ասա-
ցին, թէ այնտեղ միայն կարելի է գտնել մեր
որոնածը, այն էլ մահից յետոյ միայն: Այժմ
գտել են դրախտը. եւ ոչ թէ ամպերի ետե-
ւում, ոչ թէ ստուերների աշխարհում, այլ
այստեղ, մեզանում, շարժվող ու մտածող
մարդկանց ունեւրի տակ, փուշ ու տատակ
բուսոցով մեր հողի վրա: Եւ ասում են մեզ.
«Ձեռքե՛ք, որ մենք դրախտ վայելենք»: Եւ ես,
հէքիթական տրամադրութեան մէջ, ասում
եմ. «Ձեռնանք, որ դուք դրախտ վայելեք»:

Ահ, ինչքան նախաձեռնի կը դառնար այն
ժամանակ մարդկութիւնը: Գործը մարդկու-
թեան պարծանք կը դառնար, եթէ չը լինէր
հայը: Մենք եւ դուք, ընթերցող, գուցէ եւ հա-
մաձայնվենք այս կէտում: մեր դատաւորների
հետ: Եթէ քուրդը չունենայ հայի պէս կիճան
կովքը, եթէ քրդի համար այնքան հեշտ չը լի-
նէր ապրել հայի մօով ու արիւնով, նա ան-
կասկած, հարկադրված կը լինէր գոյութեան
կուր մէջ կատարելագործվել, դառնալ աշխա-
տաւոր, կուլտուրական մի տարր: Եւ այն ժա-
մանակ մարդկութիւնը ազատված կը լինէր այդ
յաւիտեան վայրենի, յաւիտեան արեւաբարո-
ցողից: Այսպէս մեր դատողութիւնն է, ընթեր-
ցող: Բայց չը կարծէք, որ այսպէս դատում են
եւ մեր դատաւորները: Ո՛չ, նրանք ասում են,
որ կեղեքողները մենք ենք, որ եթէ քուրդը
արիւն է սիրում, պատճառն այն է, որ կան
հինգ-տասը վախառու հայեր...

Ահա թիւքը: Նա ասում է. «մենք մի լաւ,
շատ լաւ, հանդարտ եւ ազնիւ ժողովուրդ ենք:
Մի քանի տարի առաջ ամեն տեղ սկսեցին
կանչել, թէ մենք գաղափարներ ենք ա-
նում, թէ մենք կոտորեցինք հայերին: Սուտ
բան, զրպարտութիւն միայն. ամբողջ մեղը
հայերինն է. նրանք ապստամբվեցան, նրանց
բարեկամները սկսեցին գողգողալ հրապարակ-
ներում, թէ հայերը չեն մեզ հարստահարում,
կոտորում, այլ մենք ենք նրանց այդպէս ա-
նում: Եւ թիւքը մի երկար, անվերջ երկար
հառաչանք է հանում որտից, սաստիկ վշտա-

յանքովեց տեղի երեցիփոխան, նոյնպիսի մի
պատուական անձն՝ այժմ հանգուցեալ Դադա-
րուս Սվեչնիկեանին, ուր հարկն է, փոխադրու-
մի եւ նոյն ժամանակ պարտք դրվեց նրա վրա,
որ այլ եւս երեք տարի շարունակ ժողովէ այդ
գումարը եւ չորս տարով ապահովվի եօթ որբի
կեանք Պետտիգորսկ քաղաքի անունով:

Սակայն այսօր չը կան ոչ Կաճկաճեան եւ ոչ
Դ. Սվեչնիկեան. նրանք պառկած են սառ հողի
տակ: Ո՛վ կիրաբործէ թողած աւանդը: Բայց
չէ՞ որ ապրում է միտքը, գաղափարը: Ապրում
են եւս երեք տարի շարունակ ժողովէ այդ
գումարը եւ չորս տարով ապահովվի եօթ որբի
կեանք Պետտիգորսկ քաղաքի անունով:

Միթէ դրանք կը լռեն եւ անտարբեր կը մը-
նան: Եւ այդ իրագործումը մի անգամ եւս ա-
պացոյց կը լինի, որ մենք գիտենք յարգել մեր
սրտերով մաքուր, գործերով հոգեկան լուսա-
ւոր մարդկանց յիշատակը, որ մեր մէջ կան տե-
ւական զգացմունքներ սկսած գործը շարունա-
կելու, որ մենք մեր աչքի ընկնող մարդկանց
հետ հանգիստաւոր կերպով չենք թաղում նրանց
մտքերը: Եւ այդ կը լինի ամենախթամ եւ ար-
ժանատու պատկ այն հազուադէպ լուսաւոր
գերեզմանների վրա, որոնց թողած իւրաւոր
ուղիով ընթանալ մեր կեանքի նպատակը պիտի
լինի:

Գ. Զանգ. Մկրտումեան

Աստուրական

ցած աշխարհի անարդարութիւնից: Արդար չեն մարդիկ դէպի թիւրքերը: այս խեղճերին դատաւարութեամբ են, վերաւորում են, մինչդեռ իսկական հրէշները—հայերը—դեռ նահատակի տնուն են ստանում: Ինչպէս չը վրդովվել: Եթէ մեզ, ընթերցող, տանէին դատարան այդ թիւրքի հետ, մենք, ի հարկէ, չէինք էլ փորձի արդարացնել մեզ, ասելով, թէ հայը անմեղ է, թող է, իրաւագործ է: Մենք միայն կասէինք: հապա յոյների կոտորածը Քիոս կղզում, հապա Լիբանանը, ասորիների կոտորածը, Հերցեգովինան, Բոզարիան...:

Բայց դատաւորները մեզ չեն հարցնում. չեն հարցնում նոյն իսկ պատմութիւնից: Հարկաւոր է վճիռ՝ թէ առանց հայի աշխարհը դրախտ կը լինէր: Ինչ դէպ է այս վճիռն, նա սուտ է,—այսպէս են կամենում մեր դատաւորները, ինչ կարող էք անել: Շատ որ խօսէք, կասեն թէ թիւրքական գաղութները Յուդեանայի նման են: Բոզարիայում էլ, Դամասկոսում էլ հայերի գործ են: Եւ սա զարմանալի չի լինի: Ահա այդ թիւրքը ապրում է ուստաց օրէնքների հրամանի տակ, Կարսի նահանգում: Գաղանութիւնների հարց չը կայ, պէտք է միայն խաղաղ պարել, ամաղ լինել: Մեր թիւրքը միտքացաւ ունի, եւ նա ասում է, որ եթէ ինքը չգործարար, խաւար ու յետամնաց է, պատճառն այն չէ, որ նա թաթարական ցեղի ներկայացուցիչ է, որ նա կրօնը թաթարական իսլամն է, որ իր ամբողջ անցեալում նա չէ կարող ցոյց տալ մի տանաւանակ, երբ նա, իրեն թաթարական ցեղ, Աստուծոյ պատիւ չը լինէր հանդիսացած մարդկութեան համար, ինչպէս ասել է Գլադստօնը 1876-ի բոլորական կոտորածների ժամանակ... Ո՛չ, պատճառ ոչ այն է, ոչ այն, այլ միայն այն, որ այդ թիւրքից մօտիկ կամ հեռու մի տեղ ապրում է կամ կարող է ապրել հայ...:

Ահա այս վկայութիւնները, «արդարութեան եւ անկողմնապահութեան» անունով կատարված այս դատաստանն են ինձ վրա բերում այն հէքիաթական տրամադրութիւնը, որ ինձ ցանկութիւն է ներշնչում «դէմ մի օր, մի ժամ» լինել իշխան եւ միանգամայն վերացնել այդ գանգատների, այդ բողոքների, կուրծք ծնծելու եւ վայ կանչելու միակ պատճառը: Կասէի, թող չը լինի հայը, միայն թէ Աղամի որդիները աղի արտասուք չուտեն, չփոխընձ դանդաղ կերպով չը խորովվեն...:

Բայց երբ անցնում է հէքիաթական տրամադրութիւնս, երբ սկսում եմ մեր աշխարհի, մեր օրվայ փաստերով դատել ու կշռել, այն ժամանակ միայն զգում եմ եւ տեսնում, թէ որքան իսկապէս դժբախտ ու թշուառ են այդ դրախտ որոնողները...:

Դուք կը հարցնէք, թէ դա ինչ գերք է, որ այդպիսի մտքեր ու դատաստան է պարունակում իր մէջ: Ես կը խօսեմ այդ գրքի մասին մի ուրիշ անգամ: Իսկ այսօրվայ դրոյցս բողոքովն այլ նպատակ ունի: Սա մի նախաբան է, որի մէջ ես կամենայ ծանօթացնել ձեզ դժբախտ թիւրքի, վրացու դատողութիւնների հետ: Երբ մեր այս մոլորված հարեւանները այսպէս են խօսում, այդ դեռ հասկանալի է. ասիացի են, խեղճ են, ազգէտ են, սահմանափակ են, ինչպէս եւ մենք: Բայց տեսէք, որ եւրօպացի են, նա, որ պիտի դատաւոր լինէր աւելի մեծ խելով, աւելի ուժեղ կարողութեամբ, նոյն տեսակ վճիռներ է արձակում:

Այստեղ արդէն պէտք է մտածել, կշռադատել փաստերը: Բայց այս մասին հետեւեալ կիրակի է:

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻԾ

Յուլիսի 8-ին

«Այս տարի էլ այս կողմերի հացը փչացաւ, էլ յոյս չը կայ: Իմ ծանօթս իր նամակի մէջ այս կերպ է նկարագրում Դարաչիչակի շէրջանի հացաբոյսերը, մինչդեռ դաշտային մասերում բերքը շատ լաւ է: Խեղճ Դարաչիչակ, խեղճ լեռնոտ գաւառ, երբ է ընթերցում քեզ ժպտացել, որ այժմ ժպտայ: «Այս տարի էլ հացը փչացաւ»—անա իրողութիւնը:

Այս տարվայ ձմեռը շատ տարօրինակ ձմեռ էր Երեւանի նահանգի համար: Եղանակները սպասածից շատ ու շատ տաք ու չորային անցան, շատ տեղերում, բառի բուն նշանակութեամբ, ձիւնի երես չը տեսնեք: Երեւանի համար անսովոր այս եղանակները մեծ երկրորդի մէջ էին դրել ժողովրդին: Ամենքը գուշակում էին մի շատ վատ անցերի տարի, սակայն գարունը իր առատ անձրեւներով միանգամայն այլ կերպարանք տուեց բուսականութեան եւ ցանքերին: Ապրիլ ամիսը աչքի էր ընկնում իր պարբերական անձրեւներով, այնպէս որ մայիս-

սի սկզբներում աշնանացանքները արդէն ապահովված էին անձրեւների կողմից: Մնում էր գարնանացանքը, որը բուռն է նահանգի լեռնոտ մասերը, որը եւ կազմում է այդ մասերի ժողովրդի պաշարի եւ տնտեսութեան գլխը: որ աղբիւրը: Մայիսը վերջացաւ չորային, չորային սկսվեց եւ չորային էլ վերջացաւ: յունիսը, ահա այս միջոցներին գարնանացանքները լեռնոտ մասերում զգում էին անձրեւի մեծ կարիք: Փոքրիկ տարածութեան վրա մի տեղ արդէն սկսվել էր առատ բերք խոտաբոյս հունձը, իսկ միւս տեղ չորանում էր դեռ չը հասունացած ցանքերը:

Այսպիսի խաղեր յատուկ են Երեւանեան նահանգին. չենք կարծում, որ Կովկասի որ եւ է նահանգ այն առեւտրեան կենտրոն լինի փոփոխական տաք ու ցրտերի, խորակաքեր հողմերի եւ մրկալի քամիների, որքան Երեւանը: մի քանի օրվայ ընթացքում մի եւ նոյն տարածութիւնը կարող է եւ ցրտաւոր եւ կարկտանալ լինել, կարող է խորակներին ու տաքերին զոհ գնալ: Ահա Երեւանեան նահանգի առանձնապէս մի քանի գաւառամասերը—Նոր-Բայազետը, Արարանը ու Դարաչիչակը ընկած են կլիմայական այս խառնուրդների տակ, որի պատճառով էլ շատ քիչ անգամ այդ բարձրադիրք բնութեան կամքին թողնված ժողովուրդը տեսնում է առատ բերք, վերցնում իր վաստակի պտուղը: Արագածն ու Մասիսը, Գեղարքունիաց եւ Գեղարքունի շղթաները իրանց գագաթներով կազմում են այն հովիտի եւ հողմերի աղբիւրները, որոնք եւ հանդիսանում են այս աանջված ժողովրդի բարդի քանդակը: Այսպիսի պայմանների մէջ շատ դժուար է ժողովրդի կացութիւնը, մանաւանդ որ նրա պարագլուխներին մէջ փոփոխութիւններ չեն մտնում եւ նա չարունակում է մնալ հողագործ:

Վերջին օրերը մի շարք անձրեւներ տեղացին չրվականներում, նոյնպէս Դարաչիչակի մասաւոր, բայց անձրեւը շատ արտերի վերաբերմամբ, ասում են, կորցրել է իր բարեբաւ ազդեցութիւնը: Այս հանգամանքին պէտք է վերաբերել, որ ցորենի գինը Երեւանում սպասածի չափով չի չաւ:

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԱՆ

Թուրքի, յուլիսի 1-ին

«Մշակի» վերջին համարներից մէկում պ. Վրձինը նկարագրելով իր երեւակայական ճանապարհորդութիւնը դէպի Թուրքի, ասում է, որ Թուրքիի հայ չրվաններում խօսակցութեան միակ առարկան ապագայ կենտրոնական դպրոցի խնդիրն էր եւ իբր թէ բոլորն էլ համակրութեամբ էին վերաբերում այդ խնդրին, բացի մի քանի ուսուցիչներից, որոնք վարսէնում էին անպաշտօն մնալ՝ կենտրոնական դպրոցը հիմնված դէպքում:

Իրեն երբորը տարին Թուրքիում ուսուցչութիւն անող մի անհատ եւ գործին մօտիկից ծանօթ անձնատուրութիւն՝ եւ պարտք եմ համարում պարզել այդ խնդրի մասին իմ հայեցակէտը, որ Թուրքիի սակաւաթիւ խնեղիքներայի հայեցակէտն է միանգամայն:

Թուրքիում հակառակ են կենտրոնական դպրոցի գաղափարին բոլոր ուսուցիչները, գրեթէ առանց բացառութեան, եւ հակառակ են ոչ թէ շահախնդրական դիտումներով, այլ որովհետեւ նրանք համոզված են, որ կենտրոնական դպրոցը Թուրքիում անհրաժեշտութիւն չէ եւ քրտնաջրածնի կերպով է այդ խնդիրն առաջ քաշվում: այստեղ Թուրքիին ունի այժմ երկու միջնակարգ ուսումնարան՝ Իւրաքանչիւրը ինն տարվայ դասընթացով, կայ այստեղ նաեւ երկու մանկապարտէզ, երկու արհեստանոց, երկու օրիորդաց դպրոց: Արդ, հարցնում ենք, իրական անհրաժեշտութիւն է արդե՞ք Թուրքիում կենտրոնական դպրոցը եւ նա չի լինի արդե՞ք մի աւելորդ ծախսութիւն: Սպասատում, ինչի գաւառում, Սուլդուզում, Բարանդուզում մի հատ անգամ կանոնաւոր ուսումնարան չը կայ, տեղ-տեղ էլ, ինչպէս Սուլդուզում գում են Բարանդուզում, հայերը խօսում են թուրքերէն: Փոխանակ Թուրքիի մասին մտածելու, որ ունի բարեկարգ դպրոցական եւ այլ հաստատութիւններ, իրանիզեցնելու, լարան, աւելի լաւ չէր լինի, որ մենք մտածուէինք առարկայ չինէինք մեր այն թշուառ եւ նահատակ եղբայրներին վիճակը, որոնք խաբիւսփում են տգիտութեան խաւարի մէջ առանց լուսոյ մի փոքրիկ շողի եւ որոնց կեանքն ու հոգին ամբարկու կաշկանդել են նախապաշարմունքներով: Երբեք եւ անհրաժեշտ հայեացքները Գործելու եռանդ ունիք դուք, պատիւ ձեզ: Գործեցէ՛ք, օգնութեան համբը գաւառների թշուառ ժողովրդին, ինչնեցէ՛ք այնտեղ բարեկարգ ուսումնարաններ, գրականցէ՛ք գործին հմուտ ուսուցիչների դէպի այդ ուսումնարանները եւ այն ժամանակ մենք առաջինը կը լինենք, որ երբևէ տալանք սրտով գրում կը խոնարհենք ձեզ առջ եւ աջակից ու զօրավիգ կը լինենք ձեզ այդ սուրբ գործում: Բաւական չէ ունենալ ե-

ռանդ, լաւ ձգտումներ. հարկաւոր է ունենալ նաեւ հետաետութիւն եւ տեսնել, թէ որ կողմը պէտք է ուղղել այդ եռանդը: Ցնորակաւ, անիրագործելի ծրագրերի ետեւից ընկնելով մենք մաղաչափ անգամ օգուտ չենք բերի ժողովրդին, այլ, ընդհակառակը, պատճառ կը լինենք նրա բարեկարգ հաստատութիւնների խափանման եւ ապագայում՝ փոխանակ չնորհալարութեան, կը վաստակենք նրա բուռն ատեւութիւնը եւ խորին զգուշանքը: Եւ ժողովուրդը արդար կը լինի իր վերաբերմունքի մէջ:

Յովսէփ Կարախանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՆ

«ԿԱՅԵ. ՄԻՆ. Յ.» հաղորդում է, որ կովկասեան կառավարչապետ Իշխան Գոլիցին յուլիսի 7-ին, ցերեկվայ ժամի 4-ին, իր ամուսնու հետ Պետերբուրգից հասել է Էսթէնտուկի:

Թիֆլիսի քաղաքային ու պրավան յանձնարարել է դոււմայի քարտուղար Չերկասկին կազմել կանոններ եւ հրահանգ ձայնաւորների ընտրութեան վերաբերմամբ, որ պէտք է տեղի ունենայ այս աշնանը: Չերկասկին կազմած կանոններն եւ հրահանգը, քաղաքային ու պրավայի մէջ ընկնելուց յետոյ, կը ներկայացնվեն նահանգական վարչութեան հաստատութեան եւ ապա կը հրատարակվեն տեղական լրագիրներում:

Յիշեցնում ենք նորից մեր բաժանորդներին, որ հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել թէ հին եւ թէ նոր հասցէները 40 կօպէկի մարկաների հետ միասին:

Առաջիկայ ձմեռվայ ընթացքում տեղի կունենայ Ռուսաստանում գտնվող կուրքների եւ հասարակական ժողովարանների ներկայացուցիչների համաժողովը, որի գլխաւոր գործը պէտք է լինի, բացի երկրորդական հարցերից, վճռել թղթախաղի կանոնաւորման հարցը:

Պետական խորհուրդը այժմ ընկնում է մի ծրագրի, որով կանոններ են սահմանվում ամուսնների միմեանցից բաժան ապրելու պայմանների վերաբերմամբ: Այդ ծրագրով թէ մարդը եւ թէ կինը հաւասարապէս իրաւունք ունեն դիմելու դատարանին եւ խնդրելու բաժան ապրելու թղթախաղի կանոնաւորման հարցը:

Թիֆլիսի քաղաքային դոււմայի համար ձայնաւորներ ընտրելու իրաւունք ունեցողների վերջնական ցուցակը արդէն տպագրված է եւ ուղարկւ, յուլիսի 12-ին, ներկայացրած Թիֆլիսի նահանգապետին: Գաղաքային ու պրավան, ներկայացնելով նահանգապետին ցուցակը, մի են նոյն ժամանակ թղթախաղի կանոնաւորման հարցին՝ հրատարակելու ցուցակը առաջիկայ օգոստոս ամսին: Ձայնաւորների ընտրութիւնը տեղի կունենայ մի ամիս ցուցակի հրատարակումից յետոյ:

Միմիստրների կօմիտեում, լսելով ներքին գործերի միմիստրի գեկուցումը կեանքի փոխադարձ ապահովագրութեան առաջին ընկերութեան վերաբերմամբ, որոնցք՝ 1) թող տալ հիմնել այդ ընկերութիւնը՝ նրա համար կազմված կանոնադրութեան ծրագրի համաձայն եւ այդ ծրագրի մատուցանել Նորին Կայսերական Մեծութեան բարեխայեցողութեան, եւ 2) իրաւունք տալ ներքին գործերի միմիստրին, ֆինանսների միմիստրի համաձայնութեամբ, հաստատել կեանքի փոխադարձ ապահովագրութեան ընկերութիւնների կանոնադրութիւնները՝ ղեկավարվելով Նորին Մեծութեան Բարձրագոյն հաստատութեան ներկայացրած կանոնադրութեան ծրագրով:

ՊԵՏԵՐԲՈՐԳԻԺ մեզ գրում են. «Թէպէտ մի փոքր ուշ, այնու ամենայնիւ աւելորդ չեմ համարում «Մշակի» ընթերցողներին հաղորդել Պետերբուրգի հայ գաղութի կեանքից մի ուրախելի երեւոյթ: Պետերբուրգի հայ գաղութը միայն անտարբեր է եղել դէպի ազգային—հասարակական գործերը: Տեսնելով այդ մահաւոր անտարբերութիւնը, մենք միտք տրամադրի ենք եղել կարծելու, որ ժողովուրդը մոռացել է իր պարտաճանաչութիւնը եւ ամբողջովին խրվել է իր անձնական նեղ կեանքի մէջ: Այս տարվայ ապրիլի սկիզբներին այստեղ եկաւ Բագրատ վարդապետ Վարդապետեան, որ իր կենդանի քարոզչութեամբ հասարակութեան յորդոր էր կարգում աջակցել իրան՝ Պարսկաստանում ձեռնարկված հայոց ուսումնարանների կազմակերպութեան, ուր ժողովուրդը խաբիւսփում է տգիտութեան մէջ: Մերսոպ վարդապետի աջակցութեամբ, լաւ ձգտումներ. հարկաւոր է ունենալ նաեւ հետաետութիւն եւ տեսնել, թէ որ կողմը պէտք է ուղղել այդ եռանդը: Ցնորակաւ, անիրագործելի ծրագրերի ետեւից ընկնելով մենք մաղաչափ անգամ օգուտ չենք բերի ժողովրդին, այլ, ընդհակառակը, պատճառ կը լինենք նրա բարեկարգ հաստատութիւնների խափանման եւ ապագայում՝ փոխանակ չնորհալարութեան, կը վաստակենք նրա բուռն ատեւութիւնը եւ խորին զգուշանքը: Եւ ժողովուրդը արդար կը լինի իր վերաբերմունքի մէջ:

Թիւնը այս գործի մէջ աղոթութեամբ պաշտօնից Պէտք է աւելացնել, որ Մերսոպ վարդապետը մեզ մօտ հիւր է այս մէկ տարվայ ընթացքում եւ մեծ հեղինակութիւն է վայելում մեզ մօտ: Ուսանող Յովսէփեան Արամեան տաւորվեց տարեկան 300 ռուբլի տալ մի ղական ուսումնարան ապահովացնելու, Պետերբուրգի գաղութը տարեկան 900 ռուբլի՝ գիւղական ուսումնարան պահելու եւ եկեղեցական խորհուրդը՝ տարեկան 3,000 ռուբլի՝ Նոր-Ջուղայում թեմական դպրոցն ընդարձակելու համար: Կեցցէ՛ք, պարտաճանաչ հողերականներ, որ զիտե՛ք ժողովրդին ծառայողա շահերը պաշտպանելու:

ՂՈՒՐԱՆԻԺ մեզ գրում են. «Երէկ, յուլիսի 8-ին, Ղուբայի ամարային կլուբի զանկուն սիրողները տուին առաջին ներկայացումը իր զացին Նուսպուսի երկու արարվածով «ԴՅՈՐԻ ԴՅՈՐԵՄԵՆ» պիեսը եւ գիլերիոսիմիտնէս զանազան երգերից եւ նուագներին էր խաճաճ: Թատրոնը լիքն էր, ներկայ էր եւ գուր նահանգապետը: Մուտք եղաւ հայ յիսուն ռուբլի, որը յատկացրին կլուբի մէջ ներքեւեցնելու, կլուբի անհրաժեշտ եւ յետաձգելի ծախքերը ծածկելու համար: Գիւղական տարները բարեխայեցողութեան եւ սովորել կատարել դերերը ժամը 12-ին երեկոյթը շաղաւ, յետոյ սկսեցին պարերը:

ԿԱՂԶՈՒԱՆԻԺ մեզ գրում են. «Մի քանի առաջ Երասի գետի մէջ մի հայի դիակ գտնվեց, որին, ինչպէս երեւաց վէրքերից, դաշտի երկու հարուածով սպանել, գցել էին գետի մէջ: Պատմող կարծիքն այս է, որ յիշեալը մի հարուած թիւրքահայ է եղել, որին մի քանի դատարկապօրտ օրիկաներ, որոնք շարունակ սրան—նրան կողոպտելով են պարտապաշտել են լոկ կողոպտելու նպատակով:

ԱՍՆԱՐԱՒԻԺ մեզ գրում են. «Այստեղ տեղի ունեցաւ մի գաղանկային սպանութիւն: Մ. Բ. բաժնակ մարերու գործարանում մի բանուոր սպանեց իր 5 ամսական երեխային: փայտի ուժեղ հարուածներով մերձեւոր լրաւորեց իր կնիքը, որը նոյնպէս ապրում նոյն գործարանում: Սպանութեան պատճառը յայտնի չէ, բայց զանազան տեսակ է բողոքում: ոմանք ասում են՝ իբր սպանողը լազար է, ոմանք պնդում են, որ սպանութիւն տեղի է ունեցել հարբած վիճակում, իսկ տեղը ասում են, որ նախանձն է եղել: անութեան պատճառը Ո՛րն է ուղիղ՝ դա պատճառ ցոյց էր տալ, իսկ այժմ աւելացնել, որ բանուորը ամուսնացած է 9 տարեկան իսկ երեխան միայն 5 ամսական է եւ դառնալիս զաւակն է Կինը երիտասարդ է եւ ղեցիկ: այժմ գտնվում է հիւանդանոցում, վնասվածքները մտանգաւոր է: Սպանողը կայանաւոր է: Սպանութիւնից 10 օր առաջ մարդը ձախկն էր գործարանից, իսկ կինը դեռ տեղ էր ապրում:

ՂԶԼԱՐԻԺ մեզ գրում են հետեւեալը: «Փոխանորդ Թովմա վարդապետ Բաղդասարեան առաջնորդի հրաւերով գնաց Պետրօվսկ գտնվում է ինքը: Այդ տեսակցութիւնը պէն ունենայ բաւականին արդիւնաւոր անք Աստարիանի պէս մի ընդարձակ եւ ուսուցող գործակալութիւնների բաժանված լի համար,—գործակալութիւններ, որոնք ոչ մի կապ չունեն միմեանց հետ, այլ բողոքով անջատված են Ղզլարի փոխանորդութիւնից: հոգեւոր կառավարութիւնից, որոնց պաշտօնը 90 տուն ունեցող Ղարաւալի գիւղի Ղզլարի փոխանորդական իրաւասութիւնը բաժնելով միւս գործակալութիւնների մասամբ կը թէթեւացնեն տեղին եկեղեցիները: փոխանորդական ծախսերից, եւ փոխանորդական ընդարձակելով իր պաշտօնավարութեան շրջանը՝ կարող է զարկ տալ թեմին հոգեւորականներին՝ կապելով այն Ղզլարի յաջորդութեան հետ՝ նման միւս փոխանորդութիւններին: գործի առաջնորդի մի շրջաբերականի կազմելու Աստարիանի թեմում երկու համաժողով հոգեւոր գործերի, եկեղեցական հարցը, գտն էր բարւոյթի ստորին եկեղեցական սպասուսներին նիւթական վիճակը, գտնվում են անհամեմատ խղճայի վիճակի մէջ:

Электротечатня Груз. Издат. Т-ва, Б.-Ванская ул.